

Վեր առնենք մի փոքրիկ կտոր շաքար։
Այս մարմինը այսինքն շաքարը չափա-
զանց ծակոտկեն է, և արդէն հասարակ
աչքով էլ է տեսնվում։ Մի բաժակ ջը-
րով լցնենք և մեր շաքարի կտորիկը կամա-
ցուկ ձգենք ջրի մէջ։ Շաքարը կսկսի
փոքր առ փոքր լուծուել ջրի մէջ, բայց
ջուր չի թափուիլ բաժակիցը թէ և լեքն
է։ Այս ընչիցն է։ Շաքարի ծակոտիքները
լեքն են օդով, ջուրը դուրս է մղում այդ
օդը պղպջակի ձևով և ինքը բռնում նո-
րա տեղը։ Ջուրը մտնելով նորա ծակ-
տիքների մէջ՝ միմեանցից հեռացնում է
նորա մասնիկները, այդ մասնիկները յե-
տոյ տեղաւորվում են ջրի անհատների
արանքներումը, որով և քաղցրացնում
են ջուրը։ Յայտնի բան է, եթէ մեծ կտոր

շաքար ձգենք ջրի մէջ, ջուրը կը թա-
փուի մասամբ, այդ դիպուածում ջրի բո-
լոր ծակոտիքները կը լցուին շաքարի մաս-
նիկներովը և շաքարի աւելցութեամբ կսկսի
իւր ծաւալել չափով ջուր դուրս մղել բա-
ժակից։

Այն մարմինները, որոնց ծակոտիքները
կարող ենք տեսնել հասարակ աչքով,
ասվում են Զուրկէն կամ Գիւրն։ Իսկ
այն մարմինները որոնց ծակոտիքները այն-
քան մանր են, որ չենք կարողանում հա-
սարակ աչքով տեսնել, ասվում են Խեղ-
մարմիններ։ Ամենից խտագոյն մարմիններն
են ոսկին և լուսնոսկին։

(Երբեք)

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՎԵՐԴԱՆՆ Ի ԲԵՆՏԻ.

Նուր գիշեր է ժամ հանգստի ընդմեան խաւար տխուր է գիրկը,
Հովիկն թեթեւ աստ անդ ծառոց տարուբերէ ոստքն մեղմիկ,
Լուսինն ամպոց խաւար ի ծոց իւր ցուրտ լուսոյն քանայ հորդան,
Դէպ անցք փոքրիկ մի նեղագիր, բանտին է այդ սեւտ պատուհան։
Տխուր է քանտա, որմունքն սեւաւ, ուր շունչ եւ ոչ մի լսելի
Իբր գերեզման աստ մեռելոց լուծիւն տխուր տեղի ունի,
Ուր ոչ մարդոյն ձայն յուսադիր, ոչ թռչնեկացն սիրուն սուկիչ
Առաւօտուց ոչ Արէգին ցօղուն ասղունք այսր թափանցիկ։
Նա գիշերոյն եւ ցուրտ լուսինն ոչ համարձակ զայնի նշոյլ,
Ձի լուսամուտն նեղանձուկ, վանդակապատ երկամածոյլ,
Լուսինն նուազ աղօտալոյս հազիւ ընդ այն աստ առկայծի,
Ամենայնիւ յամենայնի բանտ Պարսկական է այս տեղի։
Այս սառն գետին, բանտարկելոյս այսօր փափուկ իբր անկողին,
Ննջէ ի բուն աստ ի վրդով ի բիր եղուկ թշուառ անմին,
Ո՛վ տա եւ կամ ուստի այսրէն ի խոր հառաչ լայով հնծէ,
Մի տա Պարսիկ եղեռնագործ զմեծ պատուհաս իւր աստ քաւէ . . .

« Դու, ցանկալիդ Արսէն ճողեակ, դուս ընդ փոյթ առ Հայաստան,

« Ողջոյն սիրոյս եւ տենչանաց տուն Կորս հանուրց, եւ րո Վարդան,

« Ասա նմա, այգուցն առ քեզ զիւր ցանկալի դարձն առցէ,

« Ապա յերկիրս Հայաստանիդ զաշխարհ թողեալ փոյթ ձեպեսցէ » :

Զինչ այս . . . Վարդան . . . Հայաստանի անձկալին յոյս . . . յեցուկն ամուր . . .

Պաշտպան Ազգի . . . խարխիս կրօնի . . . սէր Հայրենեաց . . . ի բանտ տխուր . . .

Ոհ . . . վեհ հոգի . . . եւ յերազխ սա զիւր դուէ Կայր Հայաստան,

Զիւր անձկալին, յորմէ յանջատ ի սեաւ բանտիս կայ յարդեան . . . :

Փոքր մի եւ ոհ, արշալուսոյն բանին զոներ, ամպերն ի չու,

Հայոց մեծաց արեւն անուշ զայն իւր ի սեաւ բանտս այս ցօղէ,

Նշոյլ մ ի ճակատ Վեհիս այս սուրբ անմեղդութեան է քողարկու,

Աշկունքն փակ դէմք իւր տխուր 'նդ արշալուսոյն ժպտիլ կամէ:

Թռչնիկն ծառոց յոստիկ զալար զսուսօտուց զեղզեղ անուշ

Իբրբ զօրհներգ Հաստչին երգէ ընդ իւր ծագուկն միասին.

Կերթ եւս հովիկն զձայն թռչնեկին տարուբերեալ ի բանտ անյուշ,

Հայաստանի վեհանձն Ողջոյն ի սիրտ ձգէ հառաչալին:

Կարդն իսկ յանուշ քնէն զարթեալ իւր սրաբէնին փութայ ի զօրծ,

Կինըն յառաջ կոյս վազվազէ միւսն յետկոյս քայլ փոփոխէ.

Ամենն յաւուր դիմեն սրաշտօն կամ բարութեան կամ չարագործ.

Հայաստանի սիրուն Վարդիկն իբր թառամ մէն մի նստէ:

Կէն մի այդ եւ այն թառամ, Հայ պարտիզին վարդ զեղեցիկ

Պարսից յանյուշ բանտ սեաւ տխուր զիւր Հայրենիքն յիշէ սիրուն,

Զեռքն ի ճակատ, աշկունքն փառ ի պատուհան դէպ Հայրենիք

Նուիրականն իւր Հայաստան յիշէ, խնդայ, լայ զլալին:

Այդ սիրուն իւր Հայրենիք, ուր յասպարէզ ունէր յերեկն՝

Այսօր թողեալ, Պարսից ժանեաց որս է մահու կամ ուրացման . . .

Այդ պայծառն իւր Հայաստան, ուր ազգային անուշ զաշներգ

Զսիրտ ի զրգիւս դէմ ոստիին քերէ ի հեռ՝ տխուր արդ դամբան . . .

Այդ չինաղն եւ այն երկիրն ընդ որով իւր կենացն ընկեր

Յոյժ սիրելին եւ տենչականն նա ընդ որով եւ մայր չքնաղ.

Ի մի ասել բան աստ հակիրճ, ընտանեկան կատարեալ Սէր

Այսօր խաւար՝ յաշս Վարդանայ աղօտ փայլի ի շամանդաղ:

Այդ ծննդեանն իւր սուրբ որբան, ուր ժպտաց յինքն կենացն արեւ,

Եկեղեցւոյ, Ազգի, Կրօնի ուր աչք ի սէր երաց Վարդան,

Նա ուր յազատն եւ խնդայ սիրտ ու ի վրէժ ակոյեցնից,

Այսօր յաւէր եւ ի կործան գոյս Վարդանայ հանէ վերեւ:

Զինչ արդ մնայր վճիռ հաստատ եւ կամ յինչ նա այսօր ապաստան,

Զգեւ արդեօք իւր Ազգ, Կրօն, Եկեղեցի, զամենն համակ

Ուխտադրութ եւ մոլեռանդ Պարսից ի ժանտ քազուկ արեւան,

Թէ մարտ եղեալ ցիւր շունչ վերջին կռուիլ ի տէգ եւ ի նիգակ,

Կամ ի փախուստ ի Հայաստան, Սէր Հայաստան թռչել արագ,

Գունտ ժողովել, փոյթ գումարիլ ի Շահաստան սուր ասպատակ

Կռփել զՊարսից զուխ անիծից, ջնջել զհամայն ի սուր սուներ

Ի տէգ, նիզակ եւ յապառաջէնս զՊարսից տուն բերել յաւէր:
 Եւ կամ որ մեծն է ամենից, հանդիստ, անդորր եւ փառաւոր,
 Մի արդեօք այս վճիռ հաստատ, ուրանալ Ազգ, մերժել Կրօն,
 Եւ փրկութիւն Հայաստանի եւ Հայրենեաց ազատ, սուրբ օր
 Յանհաւատից ձգել ի գուճս, եւ նոցին պիղծ ներկել յարիւն.
 Եւ հետեւին եւ զեղիւօրէն առ Վարդանայ գուճս զան թափին
 Փառք եւ պատիւ, աւագութիւն, բաղդ եւ արեւ, բայց . . . երկրային:
 Յաշխարհ համայն Մամիկոնեանն պանծայ ի թագ շքեղաւոր
 Եւ Շահաստանն մէն մի Վարդան հնչէ զիւցազն եւ քաջազօր.
 Եւ ժողովուրդ եւ ազգ համակ յերկիր ի գուճս երկրպագօր
 Զհեռաւորն խոնարհ յարգանս, ծիրանաներկ եւ բեհեզեայ
 Արեւնկար պատմութեանին բերցեն հլու, կացցին ստրուկ
 Ի պատրաստի զհրաման նոր այս Վեհազին ընդ ընդ փոյթ.
 Յարեւելից եւ ի ծագաց անդր հիւսիսոյ զինքն յաւիտեան
 Զքաջ կարգան, եւ փոյթ յըշտապ առ նա յաւէրժն փութան յողջոյն,
 Զմի այս մեծ ծանիցեն վեհ եւ պանծալի շքեղ անուն,
 Թէ Վարդանն է սա մեծ վեհազն զիւցազանց հայր աստուածանման :
 Իսկ Հայաստան . . . նուիրականն Հայրենիք . . . յոր լիցի զիր
 Երբ իւր Վարդան յեցուկն ամուր մերժեալ զիւր ազգ, կրօն Փրկչական,
 Ուրացուծիւն մի յիւր ճակատ Պարսից մատնէ, զամենն համայն,
 Անծին ի փառս եւ ի պատիւ եւ ի շքեղն աւագադիր:
 Լսեսցին արդ յամեն Հայաստանի որ օդ ծծէ,
 Հնչեսցին եւ նուիրական սուրբ Հայրենեաց յամեն կուսէ,
 « Թէ Վարդանն այս Մամիկոնեան ազգասիրի ցարդ ընդ քօղով,
 « Մատնէ այսօր զՀայրենիս, ունայն փառացն փոխարէն » :
 Շուրթն Հայրենեան զեղեռնս այս յամեն ուրեք ծայնարկ առցէ,
 Բազումն Հայկեան յարիւն Պարսից ցանդն յաւիտեան ի վրէժ թաթաւ,
 Քաջ զիւցազունք, Հայազն սերունդք զտէգ ի ձեռին միշտ ի կուլ,
 Եւ Հայրենիք . . . ոհ Հայաստան . . . զՎարդանայն լացցէ կորուստ :
 Զինչ այս տխուր դիր յուսահատ, յոր Հայաստան հեծել ունի,
 Զինչ այս հառաչ, ողբ եւ լալիւն, յոր Հայկեան ազգ բառնայ հեկեկ,
 Զինչ այս խաւար, սուգ, վարագոյր, յոր սուրբ Տաճարն դնի ամփոփ.
 Զինչ է այս . . . ոհ . . . զինչ դառն աղէտ . . . յոր լայ ամբողջ Հայոց աշխարհ:
 « Այս Վարդանայ զՀայաստան ի մեռս Պարսից դառն մատնութիւն,
 « Այս Վարդանայ իւր ազգութեան եւ կրօնի ուրացութիւն » .
 Եւ զինչ յապայն ասիցէ Հայն եւ զինչ լացցէ ազատն Կրօն,
 « Մամիկոնեանն է թէ Վարդան մերս հայրենեաց անկման պատճառ » :
 Եւ զինչ սուրբ հարք զՎարդանայ դառն յիշատակ կալցեն յաւէրժ,
 Յինչ զիր սգոյ, այրիութեան լիցի այս սուրբ Եկեղեցին,
 Ո՛ր զաղօթից մատուցեն Տեառն, հաւատացեալքն, բոյրս անուշից,
 Եւ ով պատճառ այս աւերման, — « Վարդանն է դա Մամիկոնեան » :
 Այս բանտ, ուր այժմ Վարդանն նստի, նստին Հայ մարք, զաւկունքսն ի զիրկ,
 Հայ մարք, տղայք եւ ծերունիք, որք հաստատուն պահեն կրօն,
 Լացցին նորին յայս բանտ տխուր, լացցին զաւկունք եւ ծերունիք,
 ԶՀայաստան լացցեն յաւէժ, եւ զկրօն իւրեանց ազատ:
 Անէծք, նզովք աստ թափեսցին ի զլուխ մոլի, վատ մատնչին,

Հայուն արցունք սուրբ եւ վճիտ Պարսից պիտի բանտ թանալ ղենին,
Հայուն աչկունքն առաքինիք բզկարսիցքն տեսցեն արեւ.

Հայուն շուրթն մեղմ, անուշիկ զթունայիցն օդ ծծէ Պարսկին:

Ի մի տխուր բան ամփոփել, Հայն, Հայաստան, Կրօն եւ Տաճար
Ամենն յաւէր, յողբ, լաց, կական, որն ի փախուստ, որն ի կործան,
Որն առ տեղեան ժանտ զահճին զոհ, որ յարտասուտ երկրէն ի հօւ,

Ամենայնի սորին պատճառ « մատնիչ Վարդանն է ուրացող »:

Վարդան, Վարդան . . . զինչ փառք, պատիւ, աւագութեան, զինչ բարձ շքեղ,

Որք առօրեայ միմիայն եւ եթ սին ստուերք են ունայնութեան,

Մի զհայրենեաց եւ զկրօնի, ընդ սին, ունայն այդ շնորհս փառաց

Փոխես զազատն փրկութիւն եւ զյաւէժեան երջանիկ զիր . . .

« Ո՛չ, հաստատուն, ոչ վճռական, երբէք յաւէժ, այդ ոչ իմ Ուխտ ».

Ասաց, զուաց ժայն առիւծոյն, յերկիր ի արօփ, ոտքն ի դոփիւն,

« Մամիկոնեան եմէ՛ Վարդանն եմ ես առիւծ, եթէ եւ սուրբ

« Իմ հայրենեաց հզօր պաշտպան, եմէ՛ խաբիսի եւ Կրօնիս,

« Յոր յնու միշտ Որդանն իմ սուրբ նուիրականն Հայաստան՝

« Ո՛չ ժանտ Պարսկիք ինձ հաճելի, ոչ նոցին բարձ աւագութեան,

« Ո՛չ ծովութիւնք, ոչ դանձր բազում, ոչ հանրական անուն Վեհի,

« Զեղեն երբէք, չեն եւ ոչ այժմ եւ ոչ յապայն ինձ ցանկալի

« Հայաստանի սուրբ փրկութիւն եւ Կրօնի ազատութիւն

« Ահա իմ Ուխտ

« Ահա երգումն

« Զոր կնքեցի

« Յօր ծննդեան . . .

« Ես յանձն իմ իսկ զփրկութիւնն առից երկրին իմ Հայրենի.

« Ելից առ զահ մեծ արքային, յազատն ի սէր իմս Կրօնի,

« Հեռի այդ զէն, հեռի յինէն, Մամիկոնեանն Հայոց Վարդան

« Զայդ ընդունել անընդունակ », յայտնեցից զիմ վճիտ վերջին.

« Իսկ Հայաստան . . . զարձեալ այն սուրբ իմս Հայրենիք . . . եղուկ անձիս . . .

« Ո՛չ եւս տեսից, եւ փրկութիւն նորին միմէ՛ անդ անվրդով.

« Ես աստ ի մահ, զիս ոչ խղճում, անդ Հայաստան յինչ լիցի զիր,

« Յինչ եւ կրօն, Եկեղեցին . . . Վարդանն չիր, Վառակն յասպարէղ

« Ո՛չ փախուստ իմ եւ եթ հնար ի փրկութիւն Հայաստանի . . .

« Բայց . . . ռք փախեայց եւ կամ զիւնրդ սեւա այս բանտէս արտարս ի գուրս . . .

« Յոր ես մտից կերպ խաբերայ . . . կամ իւր զիմ այս սուրբ մտադիր

« Ի գուրս հանից, յըշտապ ցանկալին առնել փախուստ իմ Հայրենիս :

Այս յուսահատ դիր առիւծոյն Հայոց Մեծաց, աստ անվճիռ,

Զինչ աստ վեհիս առնել մնայր, եմէ՛ ոչ սուտ ուրացումիւն.

Թէ ոչ այս, իւր հնար էր նմա զիւր հայրենին փրկել աշխարհ.

Ո՛չ մի եւ ինչ կարծիս յուսոյ աստ չփայլէր գէթ նշուլիկ:

Մի կատարեալ ուրացումիւն Եկեղեցւոյ եւ Կրօնի,

Մի դաւաճան աստ մատնութիւն Հայ ազգութեան եւ Հայրենեաց

ԶՀայաստան կարեն փրկել յանագորոյն Պարսիցն ժանեաց . . .

Եւ աստ ներկայն, անդ ապագայն զխաղ ամին վերաբերին,

Եւ մի փախուստն ցանկալի յինչն գէթ նշուլ ունէր յուսոյ.

Իւ, կամ զխաղ Մամիկոնեանն ի Հայաստան փայլէր յանկարծ.

Զէ, փրկութեան Հայ աշխարհի ոչ այս միջոց եւ ոչ այն յոյս:

Միակ է աստ Վարդան առիւծ սիրտն ի տրոփ, յերակսն արիւն:

Տրոփ մի զետին, ճակատն ի բիրտ, դէմքն յուսահատ, զմեծ քայլափոխ

Երկայնութիւն խաւար բանտին առեալ զնայ անդ եւ զայ աստ,

Մարմինն ամրոց ի դող սարսուռ, եւ ի ցուրտ բիրտ զրեթէ մահուն,

Երեք մնայ ժամ օրհասին իւր եւ ծնօղ Հայաստանին.

Եթէ վճիռ դեռ ոչ պատրաստ, զանդորրութիւն մեծ արքային

Վրդովեցէ, յայնժամ կորեալ եւ Հայաստան, Եկեղեցի,

Աղղ եւ կրօն եւ ամենայն եւ ինքն անդ իսկ. այս է վայրկեան

Յոր ի զետին տրոփ մի երկրորդ յարեալ Վարդան ի վճիռս վերջին:

« Բեզ ամենից ստեղծօղղ, Հայր, աղերս ինկեմ, աղերս հոգւոյ,

« Զառժամեանն իմ ուրացութիւն, ի փրկութիւն է իմ Ազգին,

« Հաստատութիւն Եկեղեցւոյն, ամուր խաբիսխ սուրբ Կրօնին,

« Մի ապ' ուրեմն զներ ի մեզս, զայն քաւեցից արեամբ բազկիս.

« Տէր, զամենայն ինչ զու զիտես, եւ զինչ ի Գէն է ծածուկ.

« Գիտես եւ զիմ սիրտ, միտք, հոգի եւ զսրտիս խորհուրդ համայն,

« Զի զամենայն նուիրեմ Ազգի եւ ընդ նմին սուրբ Կրօնի,

« Ապա ի փառս Հօրդ բարեաց, զուրացութիւնս քաւեմ ի քաց.

« Վարդանն եմ ես Մամիկոնեան.

« Բո որդեգիր ստրուկ յուերժեան,

« Եւ Բեւ աշօր, ահա փրկիչ

« Հայոց Մեծաց սուրբ Կրօնի »:

Ասաց յարեալ, յոտի եկաց, սիրտն մխիթար, հոգին անդորր.

Եւ ահա զուռն քացալ բանտին, մուտ անդ դահիճն ի վերջին հարց.

Որում « այն, վնա ասս », փտահ շառաչ տուաւ առիւծն.

Ակնմարմ մի մարգպետր Պարսից, աւագորեարք աստ առ Վարդան.

Սիրով յողջոյն ի հարց խնդից,

Ապա ի մի ելին բանտէն

Եւ փոյթ յըշտապ առ մեծ արքայն

Յազկերտ երկրորդն զնացին յաւէտ »:

Իսկ դուք քաջին մերս Վարդանայ համակիր սիրտք,

Որ աստ յակումք յերեկոյիս ի մի հաւար

Զերջանիկն առնել ձկտիւք սուրբ յիշատակ

Առէք բաժակ, յոտի ելէք զայս ինչ խնդրել.

« Տէր մեր Աստուած, զերդ մերս առիւծ Մամիկոնեան,

« Շատ պարգեւեան Ազգի մերում նման Վարդան,

« Գիտցիր, զի Բո փառս եւ պատիւ է մեր սուրբ շանք,

« Եւ ի պարծանս Եկեղեցւոյ եւ Հայրութեան:

« Կեցցէ ապ' ուրեմն Հայն եւ Հայրութիւն,

« Կեցցէ այս անմահ պաշտելի անուն.

« Եւ մեր այս բաժակ

« Ի սուրբ յիշատակ

« Վարդանանց խմենք

« Որ զի հազարեակր

« Այնպիսիք վնին

« Ի Հայոց Աղղին »: